

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏԸՆԵՐԿԱՅ ԵՂԱՆ «ԴԱԻԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ»Ի
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ**

Երկուշաբթի, Ապրիլ 3-ի երեկոյեան, կազմակերպութեամբ Դաւթեան-Մարիամեան Կրթական Զաստատութեան Վարչութեան, ընդունելութիւն մը տեղի ունեցաւ Կլէստէյլի «Անուշ» ճաշարանին մէջ:

Ընդունելութիւնը սկսաւ երեկոյեան ժամը 6-ին: Այս առիթով տեղի ունեցաւ Խորհուրդի անդրանիկ նիստը. ներկայացուեցան Խորհուրդի Կեդրոնական Մարմինի գործօն անդամները:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ընդառաջելով իրեն ուղղուած հրաւերին, ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց իր օրհնութիւնները: Ներկայ էր նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տիար Զրայր Պալեան:

**PRELATE AND EXECUTIVE COUNCIL CHAIRMAN ATTEND
DAVIDIAN MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION RECEPTION**

In the evening of Monday, April 3, a reception took place at Anoush Restaurant in Glendale organized by the Davidian Mariamian Educational Foundation. The reception, which began at 6:00 p.m., was in honor of the Civic Advisory Board. The Prelate was present and conveyed his blessings. Joining the Prelate was Mr. Hrair Balian, Chairman of the Executive Council.

Ի ԽՆԴԻՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՅՄԱՆ

Երկուշաբթի, Ապրիլ 3-ի յետմիջօրէի ժամը 5-ին, Լոս Անճելըսի քաղաքապետարանին մէջ, Լոս Անճելըս քաղաքի փաստաբան Rocky Delgadillo-ի նախաձեռնութեամբ ընդունելութիւն մը կազմակերպուած էր: Ներկայ եղան Զայ Դատի յանձնախումբի անդամներ, յարակից միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ մեծ թիւով հայորդիներ:

Ընդունելութեան ընթացքին, կենդանի վկայութիւններ փոխանցուեցան Զայոց Ցեղասպանութիւնը վերապրողներու կողմէ: Իսկ Զայոց Ցեղասպանութիւնը փաստարկող վաւերական նկարներ ցուցադրեցին արուեստագետ նկարիչներ Արա Օշական եւ Լեւոն Փարեան:

Այս ձեռնարկը միջոց մը կը հանդիսանայ ցեղասպանութեան մասին դասաւանդութեան նոր ծրագիրներ եւ սեմինարներ կազմակերպելու Լոս Անճելըսի Պետական վարժարաններու ուսուցիչներուն համար:

Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Նարեկ Զինյ. Փեղիվանեան ներկայ եղաւ այս հանդիպումին, իբրեւ ներկայացուցիչը Առաջնորդ Սրբազան հօր: Ազգ. Վարչութեան կողմէ ներկայ եղաւ Տիար Բեգլար Փիլաւճեան:

LOS ANGELES CITY ATTORNEY ROCKY DELGADILLO HOSTS GENOCIDE RECEPTION

In the afternoon of Monday, April 3, a reception took place at L.A. City Hall in honor of the opening of the Genocide Exhibit “/witness”. The reception, which was organized by L.A. City Attorney Rocky Delgadillo, featured portraits and oral testimonies of Armenian Genocide survivors and the unveiling of the Genocide Education Project’s Teacher Training Program for the Los Angeles Unified School District. The exhibit showcased photographs by Ara Oshagan and Levon Parian. Representing the Prelate was Rev. Nareg Pehlivanian of Montebello’s Holy Cross Cathedral. Also present was Mr. Peklar Pilavjian, member of the Prelacy Executive Council.

ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԶԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

Միջին Արեւելքի Ուղղափառ Եկեղեցիներու Խորհուրդին, որ մեր Թեմի շրջանին մէջ կազմուած է մեր եկեղեցւոյ զոյգ Թեմերուն եւ Ղըպտի ու Ասորի Ուղղափառ եկեղեցիներուն մասնակցութեամբ, Թեմակալ Առաջնորդներու մակարդակին վրայ ժողով մը գումարեց Երեքշաբթի, Ապրիլ 4-ի առաւօտեան, Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ հիւրընկալութեամբ, Պըրպէնքի Ս. Եփրեմ եկեղեցւոյ կից Առաջնորդարանին մէջ: Ժողովը քննարկեց եկեղեցականաց միացեալ պատարագ կատարելու օրակարգը, որուն պիտի ընկերանայ հաւաքական ճաշ եւ դասախօսական ծրագիր:

Միացեալ Ս. Պատարագը եւ եկեղեցականաց համագումարը տեղի պիտի ունենայ Զինգշաբթի, Մայիս 11-ին, կ.ա. ժամը 10-էն մինչեւ կեսօրէ ետք ժամը 3, Էջմիածնական Թեմի Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ, Պըրպէնք:

Ժողովը անդրադարձաւ նաեւ Շաբաթ, Մայիս 13-ին տեղի ունենալիք միջ-կիրակնօրեայ վարժարաններու աշակերտական մրցոյթին, որ տեղի պիտի ունենայ հիւրընկալութեամբ Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 2, հովանաւորութեամբ չորս Առաջնորդներուն:

Յիշեցնենք, որ Խորհուրդը որոշած էր որ իբրեւ միասնականութեան գործնական արտայայտութիւն, ամէն տարի որոշեալ թուականի մը նուիրահաւաք կատարուի եւ հասոյթը հերթական դրութեամբ յատկացուի վերանորոգումի կարօտ եկեղեցիի մը: Իբրեւ առաջին քայլ, անցեալ Կիրակի, 2 Ապրիլ 2006-ին հանգանակութիւն կատարուեցաւ մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, իսկ Կիրակի՝ Ապրիլ 30-ին, Խորհուրդի անդամ բոլոր միւս եկեղեցիներուն մէջ նոյն նպատակով տեղի պիտի ունենայ

հանգանակություն, եւ գոյացած գումարը այս տարի պիտի տրամադրուի Հայաստանի Արմաւիրի Թեմի Բամպակաշէն աւանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ, ընդառաջելով Արմաւիրի Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Սիոն Արք. Ադամեանի խնդրանքին:

ORIENTAL ORTHODOX COUNCIL MEETING

In the morning of Tuesday, April 4, the Oriental Orthodox Council held its meeting at St. Ephraim Syriac Diocese in Burbank, with the participation of the Coptic, Syriac, and Armenian Prelates. On the agenda was the issue of joint Holy Mass along with a joint lunch and lecture program. The joint Mass will take place on Thursday, May 11 from 10:00 a.m. to 3:00 p.m. at the Western Diocese in Burbank. Also discussed was the Sunday School Bible study competition scheduled for Saturday, May 13 at Glendale's St. Mary's Church from 10:00 a.m. to 2:00 p.m.

In a prior meeting, it was decided that every year, a fundraiser should take place with the proceeds being donated to one of the member churches. As a first step, donations were collected at our Prelacy Churches on Sunday April 2 and the same will take place at other churches of the Council on Sunday, April 30, with proceeds going to St. Mary's Church of Armavir, Armenia, by request of H.E. Archbishop Sion Atamian, Prelate of the Armaviri Diocese.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՔ ԵՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ Ե.Յ.ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍԻՆ

Երեքշաբթի, Ապրիլ 4-ի երեկոյեան, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, երեկոյեան ժամը 8:30-ին, Սուրբ Գրային սերտողութենէն ետք, տեղի ունեցաւ երիտասարդական հաւաք մը:

Յատուկ հրաւերով ներկայ եղաւ եւ բանախօսեց իրաւաբան Վանա Կիցինեան: Դասախօսութեան նիւթն է՝ հայ եկեղեցւոյ ու յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերակատարութիւնը Էջիմէնիք շարժումին մէջ, եւ թէ հայ երիտասարդը ինչպէս կրնայ իր մասնակցութիւնը բերել Միջ-եկեղեցական աշխատանքներուն:

Բացման խօսքը արտասանեց եւ հաւաքը վարեց Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիմեան:

Յիշեցնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին բարձր տնօրինութեամբ, եւ կարգադրութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան հօր, Օր. Կիցինեան Փետրուարին Պրագիլոյ մէջ մեր Թեմը ներկայացուցած էր Համաշխարհային եկեղեցիներու Խորհուրդի 9-րդ ժողովին:

YOUTH GATHERING AND DISCUSSION WITH MS. VANNA KITSINIAN

On Tuesday, April 4, following Bible Study at 8:30 p.m., a youth gathering took place at Glendale's St. Mary's Church. By invitation, Ms. Vanna Kitsinian, spoke about the Ecumenical movement, more specifically the involvement of the Armenian Church in this movement and how the youth can become involved. Opening remarks were made by Very Rev. Fr. Barthev Gulumian, who also joined in the discussion. In February, Ms. Kitsinian represented our Prelacy at the World Council of Churches' conference which took place in Porto Alegre, Brazil.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԱԽԱԳԱՐԵՑ Ս. ՆԱՐԱՏԱԿԱՅ ԵԿԵՂԵՑՒՅՑ ԱՐԵՒԱԳԱԼԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Ծաղկազարդի տօնի նախօրեակին, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցան Մեծ Պահոց շրջանի վերջին Արեւագալի եւ Յսկումի արարողութիւնները: Զորեքշաբթի, Ապրիլ 5-ին, Առաջնորդ Սրբազանը նախագահեց Էնսիւնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Արեւագալի ժամերգութեան եւ փոխանցեց օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը՝ Ֆերահեան Ազգ. վարժարանի աշակերտներուն եւ ներկայ հաւատացեալներուն:

Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը գեղեցիկ աւանդութիւն մը ունի. Արեւագալի վերջին արարողութենէն ետք, կը կազմակերպէ նախաճաշի ձեռնարկ մը: Հաւաքը տեղի ունեցաւ Ֆերահեան Ազգ. վարժարանի «Տիգրանեան» սրահին մէջ: Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ ձեռնարկին եւ փոխանցեց իր օրհնութիւնները:

Իսկ Ուրբաթ, Ապրիլ 7-ի երեկոյեան, Առաջնորդ Սրբազան հայրը հանդիսապետեց Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ վերջին հսկումի արարողութեան եւ փոխանցեց օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը:

PRELATE CONDUCTS SUNRISE SERVICES AT HOLY MARTYRS CHURCH

On Wednesday, April 5, the last Sunrise services of the Lent period took place. The Prelate presided over the Sunrise services at Holy Martyrs Church in Encino where he delivered the sermon to the parishioners and to the students of Ferrahian High School. Following services, a breakfast reception took place at "Dickranian" Hall organized by the Holy Martyrs Ladies Auxiliary.

On Friday, April 7, the Prelate presided over the evening services at St. Garabed Church in Hollywood.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱՉԱՆՆ ՈՒ ԱՉԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԱՅՑԵԼԵՑԻՆ Ս. ՎԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ**

Երեքշաբթի, 4 Ապրիլի երեկոյեան, Առաջնորդ Սրբազան Յայրն ու Ազգ. Վարչութեան անդամները այցելեցին Յովիվուտի Սուրբ Կարապետ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, Յոգաբարձութեան եւ երեսփոխանական կազմին հետ: Յանդիպումը տեղի կ'ունենար ծխական շրջաններու ներկայացուցիչներուն հետ հերթական տեսակցութիւններու ծիրին մէջ:

Ժողովի ընթացքին, Առաջնորդ Սրբազան Յայրը տեղեկութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի կրօնական եւ վարչական աշխատանքներու մասին, կեդրոնանալով նոր շէնքի, քրիստոնէական Դաստիարակութեան, երիտասարդական միութեանց եւ այլ անմիջական աշխատանքներու վրայ:

Խորհրդակցութեան սիւթ եղան ծխական շրջանի աշխատանքներն ու ծրագիրները, որոնք կը միտին եկեղեցւոյ բարեգարդման ու ծխական կեանքի աշխուժացման:

**PRELATE AND THE EXECUTIVE COUNCIL MEET WITH ST.
GARABED CHURCH PASTOR AND BOARD MEMBERS**

On Tuesday, April 5, the Prelate and Executive Council met with Rev. Vicken Vassilian, Pastor, and the Board of Trustees and Delegates of St. Garabed Church. The Prelate spoke of the Prelacy's endeavors, but more specifically about the new building, Christian Education, and youth issues. Topics of discussion also included the works and future projects of the parish community.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐբԱՉԱՆԸ ԾԱՂԿԱՉԱՐԴԸ ԿԸ ՏՕՆԷ
Ս. ԽԱՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԾԽԱԿԱՆ ՅԱՄԱՅՆՔԻՆ ՅԵՏ**

Կիրակի, Ապրիլ 9-ը, տօնն Է Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքին:

Ծաղկազարդի տօնին առիթով, մեր բոլոր եկեղեցիներուն մէջ Սուրբ Պատարագ պիտի մատուցուի եւ օրուան խորհուրդը ներկայացնող քարոզ մը պիտի փոխանցուի ներկայ հաւատացեալներուն:

Մանուկները թափօր պիտի կազմեն, իսկ Ս. Պատարագի աւարտին պիտի կատարուի դռնբացեքի արարողութիւն:

Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Պատարագ պիտի մատուցանե Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի մէջ եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը: Սուրբ սեղանին պիտի սպասարկեն եկեղեցւոյ հոգեւոր հովիւները:

PALM SUNDAY SERVICES

Sunday, April 9 is Palm Sunday, the entering of Christ into Jerusalem. On this occasion, special services will take place in all of our churches, and will include a children's procession and Opening of Portals. The Prelate will conduct Holy Mass at Montebello's Holy Cross Cathedral.

ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Թեմիս եկեղեցիներու Երիտասարդաց Միութեանց Կեդրոնական Մարմինին կազմակերպած Ապրիլ ամսուան կրօնա-դաստիարակչական հոգեւոր լսարանը տեղի պիտի ունենայ Կիրակի, Ապրիլ 9-ին, կ.ե. ժամը 5-ին, Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ «Տիգրանեան» սրահին մէջ:

Երիտասարդաց հաւաքը պիտի սկսի փունջ մը հոգեւոր երգերու մատուցմամբ, ընկերակցութեամբ երաժշտական նուագարաններու:

Պիտի դասախօսէ Գերպ. Տ. Միւռն Շ. Կրդ. Ազնիկեան, նիւթ ունենալով՝ «Դռնբացէք: Հայ եկեղեցին փրկութիւն կը քարոզէ»:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, յատկապէս երիտասարդութիւնը, որպէսզի իրենց ներկայութեամբ վերահասու ըլլան մեր եկեղեցական ժարանգութիւններուն:

SPIRITUAL GATHERING AND LECTURE AT HOLY MARTYRS CHURCH

The Prelacy Youth Directorate has organized a lecture series comprised of seven monthly lectures. The first lecture took place last month in Montebello. This month's lecture will take place on Sunday, April 9, at 5:00 p.m. at Holy Martyrs Church "Dickranian" Hall in Encino. Very Rev. Fr. Muron Aznikian will speak on the subject "Opening the Gates of Heaven: Does the Armenian Church Preach Redemption". We invite faithful of all ages to be present at this spiritual gathering.

ԱՄԳ ՇԱՐԱԹԸ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Յառաջիկայ օրերուն, Աւագ Շաբաթ Է: Կրօնական ժողովի որոշումով եւ Առաջնորդ Սրբազան հօր տնօրինութեամբ, Աւագ շաբթուան ընթացքին ամէն օր երեկոյեան յատուկ ժամերգութիւն տեղի պիտի ունենայ Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ:

Աւագ Շաբթուան ընթացքին, Թեմիս Առաջնորդ Սրբազանը այցելութիւններ պիտի տայ մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն եւ պիտի ըլլայ մեր հաւատացեալ ժողովուրդին հետ:

10 Ապրիլ, Աւագ Երկուշաբթին յիշատակութեան օր Է Անպտուղ Թգենիին: Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի հանդիսապետէ Ս. Նահատակաց եկեղեցւոյ արարողութեան:

11 Ապրիլ՝ Աւագ Երեքշաբթին յիշատակի օր Է 10 կոյսերու: Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի հանդիսապետէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ արարողութեան:

12 Ապրիլ՝ Աւագ Չորեքշաբթին Յուդային կողմէ Աստուածորդուն մատնութեան օրն Է: Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի հանդիսապետէ Կլէնտէյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ արարողութեան:

13 Ապրիլ՝ Աւագ Հինգշաբթին Վերջին Ընթրիք, հաղորդութեան խորհուրդ, ոտնլուայ, ձերբակալութիւն եւ խաւարման գիշեր Է: Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի հանդիսապետէ Յովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ ոտնլուայի արարողութեան: Աւելի ուշ Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի հանդիսապետէ Կլէնտէյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ խաւարման արարողութեան:

14 Ապրիլ՝ Աւագ Ուրբաթ, խաչելութիւն եւ թաղում: Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի հանդիսապետէ Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ թաղման արարողութեան:

15 Ապրիլ՝ Աւագ Շաբաթ, ճրագալոյց: Առաջնորդ Սրբազան Յայրը Ս. Պատարագ պիտի մատուցէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ ներկայ հաւատացեալներուն:

Կիրակի, Ապրիլ 11, Սուրբ Յարութեան Տօն, Սուրբ Չատիկ:

Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի հանդիսապետէ Կլէնտէյի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Սուրբ Յարութեան արարողութեան:

PRELATE'S HOLY WEEK SCHEDULE

As you are all aware, the week of April 10 is Holy Week. The Prelate and the Religious Council have decided that this year, all our churches will hold evening services every night of the week. The Prelate will be at various churches throughout the week. Below is the Prelate's schedule for Holy Week:

Holy Monday: Holy Martyrs Church, Encino

Holy Tuesday: St. Sarkis Church, Pasadena

Holy Wednesday: St. Mary's Church, Glendale

Maundy Thursday: St. Garabed Church, Hollywood (Washing of the Feet)

St. Mary's Church (Vigil)

Good Friday: Forty Martyrs Church, Orange County
Holy Saturday: Holy Martyrs Church
Easter Sunday: St. Mary's

ՄԵՌԵԼՈՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀՈԳԵՐԱԿԱՆԱԳԻՍ ԳԵՐԵՉՄԱՆ ԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԷՋ

Ս. Չատկուան Տօնին առիթով, եւ համաձայն տարիներու աւանդութեան, ի յիշատակ համայն ննջեցելոց ազգիս հայոց, Երկուշաբթի, 17 Ապրիլ 2006, առաւօտեան ժամը 10ին, Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան Hall of Liberty սրահին մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան հօր:

Նմանապէս հոգեհանգստեան պաշտօն տեղի պիտի ունենայ Կլենտլիի Forest Lawn գերեզմանատան Church of Recessional եկեղեցւոյ մէջ: Արարողութեանց պիտի մասնակցին Թեմիս Հոգեւորականաց Դասու անդամները:

Կոչ կ'ընենք մեր բարեպաշտ ժողովուրդին, որ ներկայ ըլլան արարողութեանց ու միասնաբար յարգենք յիշատակը մեր հանգուցեալ հարազատներուն եւ մեր ժողովուրդի ննջեցեալներուն:

PRELATE TO CONDUCT REQUIEM SERVICES AT FOREST LAWN

On Monday, April 17, at 10:00 a.m. requiem services will take place at Hollywood Hills Forest Lawn's Hall of Liberty and at Glendale Forest Lawn's Church of the Recessional. The Prelate will conduct services at Hollywood Hills, with members of clergy conducting services at Glendale Forest Lawn.

Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԷՋ

Արեւմտեան մեր Թեմի տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս, Ս. Յարութեան Տօնին առիթով, Երեքշաբթի, 18 Ապրիլ 2006ի առաւօտեան ժամը 10:30ին Ս. եւ Ամմահ Պատարագ պիտի մատուցուի «Արարատ» Տան Միշըն Հիլզի համալիրի մատրան մէջ, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան հօր եւ ներկայութեամբ Թեմիս հոգեւորականաց դասու անդամներուն:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ Օրէնճ Քաունթիի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Քինյ. Երեցեան:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, որ ներկայ ըլլայ սրբազան արարողութեանց ու մասնակից ըլլայ մեր տարեց հարազատներուն տօնական օրերու ցնծութեան:

EASTER HOLY MASS AT ARARAT HOME

This year, as in previous years, Easter Holy Mass will be conducted at Ararat Home in Mission Hills. This year, services will take place on Tuesday, April 18, at 10:30 a.m. The Prelate and members of clergy will be present, with Rev. Hrant Yeretsian conducting Holy Mass and delivering the sermon.